By evaluating the qualitative features of the fig fruit and the universality of its use, we conducted a study of the properties and features of the local and imported sorts of fig. For this purpose, we used the method of comprehensive phenotyping and agrobiological assessment. As a results we have singled out the “Spitak” fig sort for large-scale production and selection work, because this sort is distinguished by its low stature, small number of seeds, relatively large fruit, symmetrical fruits, self-pollination, and resistance to phytophagous lice.

Fig – pollination – local sort of fig “Spitak” – blastophag insect – ticks

Սովորական թզենին (*Ficus carica* L.) թթազգիների ընտանիքի ծառ կամ թուփ է, հանդիպում է Հայաստանի մի շարք վայրերում՝ Իջևան, Նոյեմբերյան, Ալավերդի, Շամշադին, Գորիս, Կապան, Մեղրի և այլուր: Տարածված է ստորին, երբեմն միջին լեռնային գոտիներում, հիմնականում խճային հողերում, հարավային բարձրարտ լանջերին, կիրճերում և գետահովիտներում [10]:

Սովորաբար սովորական թզենին այնպես է հարմարված չոր մերձարևադարձային կլիմա ունեցող ստորին լեռնային գոտուն, որ դժվար է լինում տարբերել տարածման բնական արեալը երկրորդայինից՝ մշակովիից: Թզենու վայրի տեսակից բացի, բնական արեալի շրջանում նաև մշակվում է [5, 11]: Թզենին մշակվում է Հայաստանի Հանրապետության միայն ցածրադիր տաք շրջաններում, 400-600 մ ծովի մակերևույթից մինչև մեղմ կլիմայի նախալեռնային գոտի՝ առավելագույնը 800 մետր բարձրություններում: ՀՀ-ում թզենին մշակվում է Տավուշում, ինչպես նաև Սյունիքի, Լոռու և Վայոց Ձորի մարզերի որոշ ցածրադիր հատվածներում [10]:

Ներկայումս Դեբեդ գետի հովտում, հանրապետության հարավարևելյան մասում՝ Մեղրու շրջանի նոսր անտառներում, հանդիպում են թզենու վայրիացած թփեր: Մեղրու շրջանի որոշ գյուղերում՝ ծովի մակերևույթից 300-ից մինչև 900մ բարձրության վրա, տարածված են տեղական մշակովի 10 սորտեր (որոնցից 7-ը 1939թ. նկարագրել են Պ.Դ. Յարոշենկոն և Ն.Ֆ. Գրիգորյանը) և կիսամշակովի թզի գանազան ձևեր [6; 2; 1; 3]:

Թզենու սորտերի տարբերակումը դժվար է, քանի որ դրանք ՀՀ-ում ենթարկվել են գենետիկական մեծ փոփոխությունների: ՀՀ-ում թզենու տեղական և ներմուծված սորտերի բազմակողմանի, մանրակրկիտ, սելեկցիոն նպատակաուղղված հետազոտություններ դեռևս չեն կատարվել, որը կհամապատասխանի թզենու ուսումնասիրության համար նախատեսված UPOV-ի (Progress of plant variety protection based on the International Convention for the Protection of New Varieties of Plants) միջազգային մեթոդիկայի չափանիշներին:

Աշխատանքի արդիականությունն այն է, որ ուսումնասիրության արդյունքները կարող ենք օգտագործել սելեկցիայում թզենու նոր՝ բարձր բերքատու, որակյալ, վնասատուների նկատմամբ դիմացկուն սորտերի ստացման համար:

Այս աշխատանքը կարևորվում է նրանով, որ չոր մերձարևադարձային կլիմային բնորոշ պայմաններում ուսումնասիրություններ են կատարվել առաջին անգամ. մանրակրկիտ հետազոտվել են թզենու ընտրված սորտերի հատկանիշներն ու հատկությունները և արժևորվել որպես սելեկցիոն ելանյութ:

Մեր աշխատանքի նպատակն է ֆենոտիպավորել, որպես սելեկցիոն ելանյութ ընտրել, առանձնացնել թզենու տեղական և ներմուծված սորտերը՝ հետագա սելեկցիոն աշխատանքներում կիրառելու համար: Ինչպես նաև բացահայտել թզենու վնասակար օրգանիզմներին, մասնավորապես ֆիտոֆագ տզերին, որոշել տարբեր սորտերի դիմացկունությունը տզերի նկատմամբ:

Նյութ և մեթոդ: Զանի որ Պ.Դ. Յարոշենկոյի և Ն.Ֆ. Գրիգորյանի կողմից նշված թզենու բոլոր սորտերից միայն 2-ը, որոնց թվում է Սպիտակ թուզը, որոշակի արժեք ունեն որպես սորտեր, լավ են հարմարված տեղական պայմաններին և տալիս են բավարար բերք, ուստի ուսումնասիրել ենք թզենու տեղական Սպիտակ թուզ, ներմուծված Ֆինիկովի նեոպոլիտանական, Կադոտա սորտերը, կատարել ենք դրանց ֆենոտիպավորման աշխատանքները:

Նշված սորտերի ուսումնասիրության համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

ա) ուսումնասիրել սորտերի ֆենոտիպային հատկանիշները, բ) հետազոտել ֆենոփուլերի անցման ընթացքը, գ) որոշել բերքի քանակը և որակը, դ) հիմնավորել ընտրված սորտերի տնտեսական արդյունավետությունը, ե) հետագա սելեկցիոն աշխատանքների համար առանձնացնել արժեքավոր հատկանիշներով օժտված սորտերը, զ) բացահայտել թզենու ֆիտոֆագ տզերի տեսակային կազմը և դրանց նկատմամբ տարբեր սորտերի դիմացկունությունը:

Հետազոտությունների ընթացքում ուսումնասիրվել են տերևի մորֆոլոգիական հատկանիշներն ըստ միջազգային նկարագրության (UPOV)՝ տերևաթիթեղի երկարություն, լայնություն, երկարության և լայնության հարաբերակցություն, տերևաթիթեղի մակերեսի կանաչ գույնի ինտենսիվություն, հիմքի ձև, գազաթի անկյունաչափ, գազաթի երկարություն, եզրի կտրվածք և եզրի անհարթություն, խաչաձև հատվածի կտրվածք, քլորոֆիլ:

Տերևաթիթեղի երկարությունը, լայնությունը, դրանց հարաբերակցությունը, ինչպես նաև տերևաթիթեղի և տերևակողթունի երկարության հարաբերակցությունը որոշվել են քանոնով: Տերևի քաշը որոշվել է թվային կշեռքով: Տերևակողթունի հաստությունը, անտոցիանային գունավորման աստիճանը, գեղծերի քանակը, ինչպես նաև տերևաթիթեղի մակերեսի կանաչ գույնի ինտենսիվությունը, հիմքի ձևը, գազաթի անկյունաչափը, գազաթի երկարությունը, եզրի կտրվածքը և անհարթությունը գնահատվել են UPOV-ի կողմավորման միջոցով՝ վիզուալ մեթոդով:

Պտղի մորֆոլոգիական հատկանիշները գնահատվել են UPOV միջազգային մեթոդի հիման վրա, դրանք են՝ չափը, ձևը, բարձրությունը, պտղի գազաթի առկայությունը, պտղամաշկի հաստությունը, թավոտությունը, փայլը, պտղամաշկի և պտղամսի գույնը, պտղամսի կառուցվածքը, ամրությունը, քաշը, ծավալը, պտղի հասունացման սկիզբը, թթվայնությունը, դիմադրողականությունը, շաքարները:

Պտղի բարձրությունը և չափը որոշվել են կոլիսի միջոցով: Պտղի ձևը, գազաթի առկայությունը, ձևը, պտղամաշկի հարթությունը, թավոտությունը, փայլը, գույնը, պտղամսի գույնը, կառուցվածքը գնահատվել են վիզուալ մեթոդով՝ ըստ UPOV-ի: UPOV-ը, որն օգտագործվել է այս հետազոտության ժամանակ, միջազգային արձանագրություն է ամբողջ աշխարհում սորտի առանձնակիության, միօրինակության և կայունության համար [4; 5; 12; 13]:

Բերքահավաքը կատարվել է ձեռքով՝ գոլշորեն, պտուղների թերիասունացած վիճակում կամ հասունացումից մի քանի օր առաջ:

Վնասակար օրգանիզմներից ֆիտոֆագ տզերի բացահայտման և տեսակային կազմի որոշման համար իրականացվել են երթուղային հետազոտություններ, դիտարկումներ, նմուշառումներ: Ստուգվել են բնի կեղևը, տերևները, բույսի վրայի առկա և թափված պտուղները, բուսական մնացորդները: Հավաքված նմուշները տեղափոխվել են լաբորատորիա, որտեղ իրականացվել է տեսակային կազմի նույնականացում:

Վնասակար օրգանիզմների հավաքը և ֆիքսումը կատարվել են ակարողագիայում (տգա-բանությունում) ընդունված մեթոդների համաձայն [1; 3; 7; 8; 9; 10]:

Արդյունքներ և քննարկում: Մեր հետազոտության (2019-2021 թթ.) արդյունքում պարզվել է, որ Կադոտա սորտը ունի միջին աճեցողություն, ծառը հասնում է 4-5մ բարձրության: Սպիտակ թուզ սորտի սաղարթը տարածուն է, ծառի բարձրությունը հասնում է 3-3,5 մ-ի: Ֆինիկովի նեոպոլիտանական սորտի ծառը ուժեղաճ է, ծառի բարձրությունը հասնում է 6 մ-ի:

Հետազոտությունից պարզվել է նաև, որ Կադոտա սորտի տերևները եռաբլթակ են, թույլ սղոցաեզր, կոշտ, խավապատ, կիտրոնադեղին, 6-8 սմ, ուղիղ: Սպիտակ թուզ սորտը ունի եռաբլթակ, ատամնավոր եզրերով, խավապատ տերև, տերևակողթունը աղեղնաձև է, սերուցքագույն, 9-10 սմ երկարությամբ: Ֆինիկովի նեոպոլիտանական սորտը ունի եռաբլթակ, երբեմն հնգաբլթակ, սղոցաեզր, խավապատ տերև, տերևակողթունը կիտրոնադեղին է, ուղիղ, 12-15 սմ երկարությամբ:

Կադոտան ցրտադիմացկուն սորտ է, Կադոտա սորտի պտուղը ձվաձև է, իսկ երկրորդ բերքի պտուղը՝ կլորավուն: Առաջին բերքի պտուղների սերմերը մեծաքանակ են, իսկ երկրորդ բերքի պտուղներինը՝ ավելի քիչ: Պտուղները հասունացման ժամանակ օդի և հողի գերխոնավության դեպքում ունեն ոչ մեծ ճաքվածություն: Պտուղները պիտանի են թարմ և վերամշակված վիճակում օգտագործելու համար, արագ թառամում են ծառի վրա: Աչքը կիսաբաց է, կանաչ թեփուկներով, կլորավուն գազաթով, իսկ պտղի խոռոչը՝ կլորավուն:

Սպիտակ թզի սերմերը քիչ քանակությամբ են, դեղին, խոշոր, ծաղկակալը նուրբ թելավոր է, բարակ, սերուցքականաչավուն, աչքը կիսաբաց է, ունի կանաչ թեփուկներ: Սպիտակ թուզ սորտի պտղամաշկը սերուցքագույն է, բարակ, փայլուն, նուրբ, խավապատ, պտղամիսը՝ դեղնավարդագույն, քաղցր, մեղրի բուրմունքով, հյութալի, նուրբ, պտուղը գնդաձև է, պտղակոթը կարճ է: Սորտը դիմացկուն է ձմռան ցրտերին, թզի քաղցկեղին և բարձր բերքատու է: Պտուղները տուժում են հողում խոնավության պակասից. զանգվածաբար թափվում են:

Ֆինիկովի նեոպոլիտանական սորտի պտուղները տանձաձև են, պտղի խոռոչը երկայնակի է, լավ լցված պտղամսով, սերմերը դեղին են, մանր, քիչ քանակությամբ, աչքը փակ է, մանուշակագույն թեփուկներով: Պտղակոթը կարճ է, պտղամաշկը՝ բարակ, նուրբ, թույլ խավապատ, մուգ մանուշակագույն, պտղամիսը՝ մուգ մորեգույն, հատիկավոր, ուժեղ բուրմունքով, ժելեման, քաղցր: Սորտը դիմացկուն է հիվանդու-

թյունների նկատմամբ, պտուղները պահուսկի և փոխադրության են, օդի և հողի գերխոնավության պայմաններում պտուղները կայուն են թթվելու և ճաքելու նկատմամբ: Ծառերը բարձրաճ են, պտուղները անկայուն գունավորում ունեն, պտուղների հասունացումը ձգձգվում է:

Աղյուսակ 1. Թզենու վեգետատիվ բողբոջների փոփոխությունները (2019-2021թթ. միջին տվյալներով)

Փորձի տարբերակները	Բողբոջների ուռչում	Շիվերի առաջացում	Վեգետատիվ աճման շրջան	Գազաթնային բողբոջների կազմավորում	Տերևաթափ			Վեգետացիայի տևողությունը, օր
					Սկիզբ	Չանգվածային	Ավարտ	
Սպիտակ թուզ	18.04.	30.04.	30.04-20.06.	25.06.	15.10.	25.10.	02.11.	216
Ֆինիկովի նեոպոլիտանական	25.04.	06.05.	06.05-18.06.	24.06.	08.11.	14.11.	16.11.	230
Կադոտա	10.04.	22.04.	22.04-26.06.	30.06.	20.10.	27.10.	03.11.	217

Մեր հետազոտություններով պարզվել է (աղ. 1), որ Ֆինիկովի նեոպոլիտանական սորտի վեգետացիայի շրջանի տևողությունը կազմել է 230 օր, իսկ Կադոտա սորտինը՝ 217 օր: Տերևական Սպիտակ թզի վեգետացիայի տևողությունը կազմել է 216 օր:

Պարզվել է, որ թզենու բեղմնավորման պրոցեսը բարդ է, յուրօրինակ: Խաչաձև փոշոտումը տեղի է ունենում միայն թզի կրետի (*Blastophaga psenes*) մասնակցությամբ: Մեկ տարվա ընթացքում բլաստոֆագը տալիս է երեք սերունդ: Այդ սերունդները համապատասխանում են թզենու պտղաբերման գեներացիաներին [4]: Թզենու առաջին պտուղները հուլիս-օգոստոսին առաջանում են երկու տարեկան, իսկ երկրորդ պտուղները՝ աշնանը, ընթացիկ տարվա շիվերի վրա:

Աղյուսակ 2. Թզենու գեներատիվ բողբոջների փոփոխությունները (2019-2021թթ. միջին տվյալներով)

Փորձի տարբերակները	Ծաղկում	Պտուղների հասունացման սկիզբը	Պտուղների լրիվ հասունացում
Սպիտակ թուզ	15.06.	09. 09.	17. 09.
Ֆինիկովի նեոպոլիտանական	10.07.	06.10.	14.10.
Կադոտա 1-ին բերք	18.05.	14.07.	22.07.
Կադոտա 2-րդ բերք	14.07.	12.09.	20.09.

Թզենու գեներատիվ բողբոջների ուսումնասիրությունից պարզվել է (աղ. 2), որ Ֆինիկովի նեոպոլիտանական սորտը, Սպիտակ թուզը ինքնափոշոտվող են, բերք են տալիս միայն մեկ անգամ՝ 2019-2021թթ.-ի միջին տվյալներով օգոստոս-սեպտեմբերին, Կադոտան ևս ինքնափոշոտվող է, բայց բերք է տալիս 2 անգամ, առաջին բերքի պտուղները հասունանում են հուլիսին, իսկ երկրորդ բերքի պտուղները՝ օգոստոսի կեսից մինչև սեպտեմբերի երկրորդ կեսը: Կադոտա, Ֆինիկովի նեոպոլիտանական սորտերը կարող են պտղաբերել նաև առանց փոշոտման: Ծաղկումը, ըստ 2019-2021թթ. տարիների միջին տվյալների, կատարվել է հուլիսի 10-ին, պտղի լրիվ հասունացումը տեղի է ունեցել հոկտեմբերի 1-ին տասնօրյակում:

Սպիտակ թուզ սորտի ծաղկումը տեղի է ունեցել հունիսի 1-ին տասնօրյակում, իսկ պտղի լրիվ հասունացումը՝ սեպտեմբերի 1-ին տասնօրյակում: Արդյունքներից պարզվել է, որ թզենու պտուղը՝ պտղաբույլը, զարգանում է 50-90 օրում:

Ցանկացած սորտաուսումնասիրություն միտված է նրան, որ ընտրվեն բարձր բերքատու, որակյալ պտուղներ ունեցող սորտեր:

Աղյուսակ 3. Թզենու սորտերի ութ տարեկան ծառերի բերքատվության արդյունքները (2019-2021թթ. միջին տվյալներով)

Սորտերի անվանումը	Պտղի միջին կշիռը, գրամ /100 պտղի միջինը/	Բերքը մեկ ծառից, կգ	Բերքատվությունը, տ/հա
Սպիտակ թուզ	33	6,0	5,3
Ֆինիկովի նեոպոլիտանական	43	8,0	7,11
Կադոտա 1-ին բերք	52	5,0	4,45
Կադոտա 2-րդ բերք	40	4,0	3,55

Մեր աշխատանքում ուսումնասիրված սորտերի բերքատվության արդյունքները ներկայացված են ութ տարեկան ծառերի հաշվարկով (աղյուսակ 3): Թզենու սնման մակերեսը այգում կազմել է 4,5x2,5մ, ծառերի քանակը մեկ հեկտարում՝ 889 հատ: Կադոտա սորտի մեկ հեկտարից 2019-2021թթ.-ի միջին տվյալներով ստացվել է 3,55-4,45տ/հա բերք: Ֆինիկովի նեոպոլիտանական սորտի մեկ հեկտարից ստացվել է 7,11տ/հա բերք, իսկ Սպիտակ թուզ սորտի մեկ հեկտարից՝ 5,3 տ/հա: Ամենախոշոր պտուղներով 2019-2021թթ.-ի միջին տվյալներով աչքի են ընկել Կադոտա սորտի 1-ին բերքի պտուղները՝ 52 գրամ:

Վնասակար օրգանիզմներին բացահայտելու համար Սպիտակ թուզ, Կադոտա, Ֆինիկովի նեոպոլիտանական սորտերի վրա կատարված հետազոտությունների արդյունքում արձանագրվել է ֆիտոֆագ տզերի 6 տեսակ, որոնցից 2-ը *Tetranychidae*, 1-ը *Tenuipalpidae*, իսկ 3-ը *Eriophyidae* ընտանիքների ներկայացուցիչներ են: Թզենու վրա ֆիտոֆագ տզերի տեսակային կազմը ներկայացված է աղյուսակ 4-ում: Ինչպես երևում է աղյուսակ 4-ի տվյալներից, թզենու 3 տարբեր սորտերի վրա զարգացել են տզերի հետևյալ 6 տեսակները՝ *Tetranychus urticae* Koch, 1836, *Panonychus hadzibejliae* Reck, *Cenopalpus punicae* Prit et Bak., *Rhyncaphytoptus ficifoliae* K., *Acaria ficus* (Cotte.), *Acaria granati* Can. et Fanz:

Աղյուսակ 4. Թզենու վնասող տզերի տեսակային կազմը և դրանց բաշխվածությունը ըստ կարգաբանական միավորների

Տիպ	Դաս	Կարգ	Ընտանիք	Ցեղ	Տեսակ
Arthropoda	Arachnidea	Acarina	Tetranychidae	<i>Tetranychus</i> Dufour, 1832	<i>Tetranychus urticae</i> Koch, 1836
				<i>Metatetranychus</i> Reck, 1947	<i>Panonychus hadzibejliae</i> Reck.
			Tenuipalpidae	<i>Cenopalpus</i> Prit, et Baker, 1958	<i>Cenopalpus punicae</i> Prit et Bak.
			Eriophyidae	<i>Eriophini</i> Nalepa, 1898	<i>Rhyncaphytoptus ficifoliae</i> K.
					<i>Acaria ficus</i> (Cotte.)
					<i>Acaria granati</i> Can. et Fanz.

Ուսումնասիրելով Սպիտակ թուզ, Կադոտա, Ֆինիկովի նեոպոլիտանական սորտերը՝ պարզվել է, որ տզերի նկատմամբ առավել դիմացկուն է Ֆինիկովի նեոպոլիտանական սորտը, համեմատաբար ավելի քիչ՝ Կադոտա սորտը, և բարձր դիմացկունություն է ցուցաբերել Սպիտակ թուզը:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տզերից ամենաշատը վնասվել է Ֆինիկովի նեոպոլիտանական սորտը, որի վրա հայտնաբերվել են տզերի հետևյալ տեսակները՝ *Tetranychus urticae* Koch, *Panonychus hadzibejliae* Reck, *Rhyncaphytoptus ficifoliae* K., *Acaria ficus* (Cotte.):

Սելեկցիոն հատկանիշներով և չոր մերձարևադարձային կլիմայական գոտուն բնորոշ պայմաններում արտադրության համար առանձնացվել են ուսումնասիրված Սպիտակ թուզ, Ֆինիկովի նեոպոլիտանական, Կադոտա սորտերը, դրանցից Սպիտակ թուզ տեղական սորտը ունի միջին քանակի բերք: Երկու անգամ բերք տալու հատկությամբ արժեքավոր է Կադոտա սորտը, որը նաև բերքատու սորտ է: Ֆինիկովի նեոպոլիտանական սորտը բարձր բերքատու սորտ է: Ֆիտոֆագ տզերի նկատմամբ դիմացկունությամբ աչքի է ընկնում ուսումնասիրված երեք սորտերից մեկը՝ Սպիտակ թուզը: Ֆինիկովի նեոպոլիտանական սորտը ավելի թույլ դիմացկուն է, իսկ Կադոտա սորտը համեմատաբար ավելի ուժեղ է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Բաղդասարյան Ա.Տ.* Գյուղատնտեսական կուլտուրաների վնասատու տզերը և պայքարը նրանց դեմ: Երևան, էջ 10-64, 1966:
2. *Բեկետովսկի Ա.Ն.* Թզենի: Երևան, 62 էջ, 1955:
3. Խաղողի, պտղատու և հատապտղատու տնկարկների պաշտպանությունը վնասատուներից ու հիվանդություններից: Երևան, 310 էջ, 2000:
4. *Խաչատրյան Ա.Ռ.* Ագրոնոմիական հետազոտությունների մեթոդներ: Ուսումնական ձեռնարկ: Երևան, Ասողիկ, 238 էջ, 2002:
5. Հայաստանի պտուղները: 4 հտ., Երևան, 125 էջ, 1976:
6. *Սանթրոսյան Գ.Ս., Հովհաննիսյան Ա.Ռ., Գաբրիելյան Գ.Ս.* Պտղաբուծություն: Երևան, 115 էջ, 2014:
7. *Арутюнян Э.С., Дилбарян К.П.* Паразитиформные клещи (Acarina: Parasitiformes Reuter, 1909) Республики Армения и их значение в различных ценозах. Изд-во "Гитутюн" НАН РА, Ереван, 505-552 с., 2006.
8. *Багдасарян А.Т.* Фауна Армянской ССР. Тетранихоидные клещи (надсемейство Tetranychoidae). Ереван. Изд. АН Армянской ССР, 163 с., 1957.
9. *Дементева М.И.* Фитопатология. М., с. 163-165; 340-349, 1985.
10. Прогноз появления и учет вредителей и болезней с/х культур. М., с. 23-76, 1959.
11. Флора Армении. /Под ред. А.Л.Тахтаджяна/. Изд. АН Арм ССР, т.4, Ереван, с. 353-354, 1962.
12. *Gabrielian Eleonora & Zohary Daniel* Wild relatives of food crops native to Armenia and Nakhichevan: — Fl. Medit. 14: p. 5-80, 2004.
13. https://www.upov.int/edocs/mdocs/upov/fr/tc/46/tg_fig_proj_6.pdf.

Ստացվել է 12.06.2022



Հայաստանի կենսաբ. հանդես, 3 (74), 2021

DOI:10.54503/0366-5119-2022.74.3-58

**ՍԵՎ ԿԵՌՆԵՆՆԵՐԻ (*TURDUS MERULA LINNAEUS, 1758*)
ԲՆԱԴՐՄԱՆ ԷԿՈԼՈԳԻԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ԲԱՐԱԶԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Վ.Տ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ¹, Լ.Գ. ԱՅԴԻՆՅԱՆ²

¹ԱՀ բնապահպանության կոմիտե,
²Շուշիի տեխնոլոգիական համալսարան
luskarapetian@gmail.com

Աշխատանքում առաջին անգամ ներկայացվում է Ստեփանակերտ քաղաքի տարածքում սև կեռնեխների բնադրման Էկոլոգիան: Չնայած սև կեռնեխները համարվում են տիպիկ անտառային թռչուններ, իրենց Էկոլոգիական բարձր ճկունության շնորհիվ հեշտությամբ հարմարվում են ուրբանիզացված տարածքներին: Դիտարկումներով պարզել ենք, որ սև կեռնեխները քաղաքի տարբեր հատվածներում բնադրման համար օգտագործում են մոտ 23 տեսակի բույսեր և մարդաշեն կառույցներ: Բները կառուցում են գետնից միջինում 0,5-7 մ բարձրությունների վրա, իսկ որպես շինանյութ օգտագործում են ինչպես բնական, այնպես էլ անթրոպոգեն ծագման նյութեր:

Սև կեռնեխ – Արցախ – Ստեփանակերտ – Էկոլոգիա – բույս – ուրբանիզացիա

В работе впервые представлена экология гнездования черных дроздов на территории г. Степанакерта. Хотя черные дрозды считаются типичными лесными птицами, благодаря высокой экологической гибкости они легко приспосабливаются к урбанизированной местности. Путем наблюдений мы выяснили, что черные дрозды используют для гнездования около 23 видов растений и сооружений в разных частях города. Гнезда строят на средней высоте 0,5-7 м от земли, а в качестве строительных материалов используют как природные, так и антропогенные материалы.

Черный дрозд – Арцах – Степанакерт – экология – гнездо – урбанизация

The ecology of nesting common blackbirds in the territory of Stepanakert city, Artsakh are presented. Although common blackbirds are considered typical forest birds, due to their high ecological flexibility, they easily adapt to urban areas. Through observations, we found out that common blackbirds use about 23 species of plants and artificial structures for nesting in different parts of the city. Nests are built at an average height of 0,5-7 m from the ground, and both natural and anthropogenic materials are used as building materials.

Common Blackbird – Artsakh – Stepanakert – ecology – nest - urbanization

Ի տարբերություն բնական լանդշաֆտների՝ ուրբանիզացված տարածքներում թռչունների տարբեր Էկոլոգիական խմբերի համար առկա են ամենաբազմազան բնակատեղերը: Չնայած ուրբանիզացված տարածքներում առկա են տարաբնույթ

ծայրահեղ գործոններ, որոնք սթրես են առաջացնում թռչունների համար, այնուամենայնիվ քաղաքը և քաղաքամերձ տարածքները մնում են թռչունների տեսակային բազմազանությամբ հարուստ վայրերից մեկը [3]: Այդ մասին է վկայում այն փաստը, որ Արցախի Հանրապետությունում առայսօր հայտնի 223 տեսակի թռչունների մոտ 59,6-60,5 %-ը բնակվում կամ բնադրում են Ստեփանակերտ քաղաքում և քաղաքամերձ տարածքում: Ընդ որում Ստեփանակերտ քաղաքի օրնիտոֆաունան հիմնականում կազմված է թռչունների դենդրոֆիլ խմբերից, ինչը պայմանավորված է քաղաքի տարբեր բնույթի կանաչ ծառատնկիներով (պուրակներ, պարկեր, անտառապուրակներ): Չնայած քաղաքային դենդրոֆլորայում և անտառներում բնադրող թռչուններն ունեն կազմավորումների ընդհանուր նմանություն, այնուամենայնիվ թռչունների առաջին խումբը տարբերվում է ուրբանիզացված տարածքում իր հարմարվածության Էկոլոգո-Էթոլոգիական առանձնահատկություններով: Բնակեցված տարածքների անկայունությունը և պարբերաբար իրականացվող փոփոխությունները քաղաքային պոպուլյացիաների ձևավորման համար սահմանափակող գործոններ են: Այս առումով ուրբանիզացված միջավայրերին անտառային թռչունների հարմարվելու առանձնահատկությունների ուսումնասիրությունները ժամանակակից կենդանաբանության և Էկոլոգիայի ակտուալ հիմնախնդիրներից են:

Սև կեռնեխներն (*Turdus merula*) տիպիկ անտառային այն թռչնատեսակներից են, որոնք բարեհաջող յուրացրել են Եվրոպայի մի շարք ռեգիոններ, որտեղ ձևավորված պոպուլյացիաներն իրենց մի շարք Էկոլոգիական, մորֆոֆիզիոլոգիական, Էթոլոգիական առանձնահատկություններով տարբերվում են իրենց բնական լանդշաֆտների պոպուլյացիաներից [5, 8-11]:

Թռչունների սինանթրոպ կենսակերպին անցնելու կարևոր փուլերից է քաղաքային միջավայրի յուրացումը: Դա պայմանավորված է Էկոլոգիական, վարքագծային, տարածական, սևնդային և այլ ասպեկտներով [4, 7]: Ուրբանիզացված տարածքներին հարմարվածությունը բնականաբար հանգեցրել է սև կեռնեխների Էկոլոգոկենսաբանական փոփոխություններին, ինչը պատասխան է տվյալ միջավայրի գործոններին:

Սև կեռնեխներն օժտված են Էկոլոգիական բարձր ճկունությամբ և շարժունությամբ, որի շնորհիվ ունեն լայն արեալ և տարածման բարձր արագություն: Ներկա պայմաններում այս թռչունները լիարժեք յուրացրել են Ստեփանակերտ քաղաքի բոլոր լանդշաֆտները: Ինչպես գրականության տվյալներով [6, 12], այնպես էլ մեր դիտարկումներով պարզվել է, որ ուրբանիզացված տարածքներում կեռնեխների մեջ բնային բնազդի և հարմարվողականության առավել մեծ ճկունություն են դրսևորում սև կեռնեխները: Սև կեռնեխները Էկոլոգիական ճկունություն են ցուցաբերում ինչպես բնակատեղերի ընտրության, այնպես էլ բների կառուցման վարքագծում [3], ինչն առանձնապես դրսևորում են անթրոպոգեն լանդշաֆտում:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրությունները կատարվել են 2017-2022թթ.-ին բնադրման շրջանում: Հիմնական տեղեկությունները հավաքել ենք Ստեփանակերտ քաղաքի պուրակներում, այգիներում, զբոսայգում և քաղաքամերձ տարածքներում: Սև կեռնեխների բնակական հաշվարկը իրականացրել ենք բնային տարածքների տեղագրման մեթոդների օգտագործմամբ [1]: Բների դիտարկումները սկսել ենք մարտի վերջերին և ապրիլի կեսերին և շարունակել մինչև հունիսի երկրորդ կեսերը: Բները հայտնաբերելուց հետո չափագրել ենք, տեղանքի բարձրությունը որոշել ենք GPSmap62stc էլեկտրոնավիզացիոն սարքավորմամբ: Բնային կառույցների չափումների համար օգտագործել ենք ժապավեններ կամ քանոններ և կատարել ենք հետևյալ չափումները՝ բնի տրամագիծը (D), գավաթի տրամագիծը (բնի ներսի պատերի միջև եղած հեռավորությունը)՝ d, բնի բարձրությունը (H), գավաթի խորությունը (h), չափումներն իրականացվել են մինչև 50 մմ ճշտությամբ: Ձվերի չափումներն իրականացրել ենք շտանգեն ցիրկուով, մինչև 0,1 մմ ճշտությամբ: Ձվերի գրանցումը իրականացրել ենք բներում հենց առաջին ձվի ի հայտ գալուց սկսած և շարունակել հետագայում: Բների դիտարկումները կատարել ենք յուրաքանչյուր 7 օրը մեկ: Այն դեպքում, երբ բները եղել են դժվարամատչելի վայրերում, և անհնար է եղել դիտարկել բնի պարունակությունը, նշել ենք միայն կենսամիջավայրը, ծառի կամ թփի տեսակը և գետնից մոտավոր բարձրությունը: Բների դիտարկումները սկսել ենք մարտի առաջին կեսից և շարունակել մինչև հունիսի երկրորդ կեսը:

Նշված ժամանակահատվածում Ստեփանակերտ քաղաքի տարածքում հայտնաբերել ենք 275 բույս:

Ստեփանակերտը հայկական հնագույն բնակատեղիներից մեկն է, այն գտնվում է Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասում՝ Արցախի լեռնաշղթայի Նախալեռնային գոտու ոչ մեծ հարթության վրա՝ Կարկառ գետի վտակ Վարարակնի ձախ ափին՝ 650-1100 մետր բարձրությունների վրա: Շրջապատված է անտառներով, այգիներով: Ստեփանակերտը այժմ ունի 29,12 կմ² տարածք, որից կանաչապատ տարածքը կազմում է 4,253 կմ²: Ստեփանակերտն ունի մեղմ կլիմայական պայմաններ: Հունվարի միջին ջերմաստիճանը -0,2 °C է, իսկ հուլիսինը՝ +22,4 °C, օգոստոսինը՝ +22,2 °C: Մթնոլորտային տեղումները տարեկան միջին հաշվով կազմում են 535 մմ:

Ստեփանակերտի ժամանակակից կանաչապատումն ընդգրկում է պուրակները, այգիները, բուլվարները և բնական կանաչ լանդշաֆտները՝ անտառապուրակները և քաղաքային անտառները: Ստեփանակերտի պուրակների, այգիների հիմնական ծառատեսակներից են լորենին, տսենին, թխկին, կաղնին, ցախակեռասենին, սոճին, լոճին, թույան և այլն, կան նաև տարբեր տեսակի պտղատու ծառեր, ինչպես նաև ուռիներ ու բարդիներ: Քաղաքամերձ տարածքներում, բացի նշված ծառատեսակներից, առկա են տարատեսակ ծառաթփեր՝ սզնի, մամխենի, ցաթենի, մոշենու թփեր և այլն:

Արդյունքներ և քննարկում: Ստեփանակերտում սև կեռնեխները բնադրում են լայնատերև և խառն անտառներում, պուրակներում, գերեզմաններում, այգիներում, ցածրահարկ կառույցներում, այգիների լքված տնակներում, բուլվարների կանաչ տնկիներում, կենդանի և չորացած ծառերի փչակներում (աղ. 1):

Աղյուսակ 1. Անթրոպոգեն տրանսֆորմացիաներում սև կեռնեխների բնադրավայրերը (%)

Բների տեղադրման վայրը	Քաղաքի կենտրոնում		Քաղաքի արվարձաններում		Քաղաքամերձ տարածքներում	
	n	%	n	%	n	%
Լայնատերև ծառեր	25	30,9	28	30,4	32	31,4
Փշատերև ծառեր	11	13,6	9	9,8	9	8,8
Լայնատերև թփուտներ	26	32	29	31,5	33	32,3
Փշատերև թփուտներ	12	14,8	17	18,5	21	20,6
Գետնին	0	0	0	0	0	0
Մարդաշեն կառույցներ	7	8,7	9	9,8	7	6,9
Ընդամենը	81	100	92	100	102	100

Սև կեռնեխները բների կառուցման համար օգտագործում են տարաբնույթ բույսեր, մամուռներ, բուրդ, փետուրներ: Առայսօր մեր կողմից կատարված դիտարկումներով պարզել ենք, որ սև կեռնեխներն իրենց բների կառուցման համար հիմնականում օգտագործում են 23 տեսակ ծառաթփուտային բույսեր, ընդ որում Ստեփանակերտ քաղաքի տարբեր հատվածներում նախընտրում են տարբեր տեսակի ծառեր և թփեր (աղ.2):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ստեփանակերտի կենտրոնում առավել նախընտրելի տեսակն ուռենին է՝ 11,2 %, թխկին ու խնձորենին՝ 9,9 %, արվարձաններում նախընտրում են ցախակեռասը՝ 8,7 %, թխկին, մոշենին, մամխենին, քաղաքամերձ տարածքներում առավել նախընտրելի բնադրավայրերն են մոշի թփերը՝ 13,7 %, ցախակեռասն ու մամխենին՝ 11,8 %, սզնենին՝ 10,8 %:

Ընդհանուր առմամբ մեր դիտարկումներով ծառաբույսերի, ծառաթփերի և թփաբույսերի տեսակային բազմազանության մեջ սև կեռնեխները բոլոր հայտնաբերված բների մեջ թփերից առավել շատ նախընտրում են բնադրել ցախակեռասների վրա (9,45 %), երկրորդ տեղը զբաղեցնում են մոշենիները (9 %), հետո՝ մամխենին (6,9 %) և հաջորդաբար՝ մյուսները: Ծառաբույսերի մեջ առաջին տեղը զբաղեցնում է թխկենին (6,9%), հետո՝ ուռենին (6 %), կաղնին և սզնին (5,8 %): Երբեմն բներ կառուցում են չորացած ծառերի և ճյուղերի վրա, որն արձանագրել ենք անտառներում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ստեփանակերտ քաղաքի կանաչապատ տարածքների նկատմամբ իրականացվում են վերահսկողություն և խնամք, ուստի քաղաքում և քաղաքամերձ տարածքներում չոր ծառերի վրա բներ չենք արձանագրել:


Աղյուսակ 2. Ան կենտեխների կողմից բնադրման համար օգտագործվող ծառերը և թփերը

Ծառերի և թփերի տեսակներ	Բների թիվը						Ընդամենը
	Զաղաքի կենտրոնում		Զաղաքի արվարձաններում		Զաղաքամերձ տարածքներում		
	n	%	n	%	n	%	
Ծառեր							
Լորենի - <i>Tilia</i>	4	4,9	2	2,2	-	-	6
Կաղնի - <i>Quercus</i>	7	8,6	6	6,5	3	2,9	16
Հացենի - <i>Fraxinus</i>	-	-	3	3,3	2	1,9	5
Թխկի - <i>Acer</i>	8	9,9	7	7,6	4	3,9	19
Սոսի - <i>Platanus</i>	-	-	4	4,4	-	-	4
Ուռենի - <i>Salix</i>	9	11,2	6	6,5	2	4,9	17
Բարդի - <i>Populus</i>	-	-	2	2,2	-	-	2
Սալորենի - <i>Prunus</i>	7	8,6	-	-	3	2,9	10
Խնձորենի - <i>Malus</i>	8	9,9	3	3,3	-	-	11
Տանձենի - <i>Pyrus</i>	6	7,4	-	-	-	-	6
Խուրմա - <i>Diospyros</i>	5	6,3	-	-	-	-	5
Սոճի - <i>Pinus</i>	-	-	5	5,4	2	1,9	7
Նոճի - <i>Cupressus</i>	-	-	2	2,2	-	-	2
Սզնի - <i>Crataegus</i>	-	-	5	5,4	11	10,8	16
Չկենենի - <i>Mespilus</i>	-	-	6	6,5	9	8,9	15
Թփեր							
Տիլենի - <i>Corylus</i>	7	8,6	4	4,4	6	5,9	17
Ցախակեռաս - <i>Lonicera</i>	6	7,4	8	8,7	12	11,8	26
Եղրևանի - <i>Syringa</i>	4	4,9	5	5,4	4	3,9	13
Ցաքի - <i>Paliurus spina</i>	-	-	-	-	8	7,9	8
Մոշենի - <i>Rubus caesius</i>	4	4,9	7	7,6	14	13,8	25
Գիհի - <i>Juniperus</i>	-	-	5	5,4	7	6,9	12
Մամխենի - <i>Prunusspinosa</i>	-	-	7	7,6	12	11,8	19
Հաղարթենի - <i>Ribes</i>	6	7,4	5	5,4	3	2,9	14

Սեր դիտարկումներով սև կենտեխները բնադրում են գետնի մակերևույթից տարբեր բարձրությունների վրա, միջինում՝ 0,5-7մ ($2 \pm 0,36$; $Cv=25\%$, $n=275$), անմիջապես գետնի վրա բներ չենք հայտնաբերել: Առավել ցածր (0,5մ) և բարձր (7 մ) բները տեղադրված են եղել բաղաբամերձ տարածքներում: Ցածր բները եղել են մոշենու թփերում, իսկ բարձրերը՝ հացենու և սոճենու վրա: Առավել մեծաթիվ բներ կառուցում են գետնից 1-ից մինչև մոտ 3 մ բարձրություններում: Ուսումնասիրված 275 բներից 71-ը կամ մոտ 25,8 %-ը տեղադրված են 1,5-ից մոտ 2 մ-ի վրա (տե՛ս գծանկարը): Բների բարձր տեղադրվածություն ունեն ուրբանիզացված պոպուլյացիաները: Տարբեր բարձրություններում բների տեղադրությունը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է անհանգստացնող գործոնների մակարդակով:

Աղյուսակ 3. Ստեփանակերտ բաղաքի տարբեր հատվածներում սև կենտեխների բների տեղադրման բարձրությունները, մետրերով

Զաղաքի հատվածները	min-max	M±m	Cv%	n
Ստեփանակերտի կենտրոնում	1-6	$2,7 \pm 0,14$	48,1	81
Ստեփանակերտի արվարձաններում	0,8-4	$1,6 \pm 0,1$	41,9	92
Զաղաքամերձ տարածքներում	0,5-7	$2,6 \pm 0,17$	65,4	102
Ամբողջ տարածքում	0,5-7	$2 \pm 0,36$	25	375



Փծանկար 1. Սև կենտեխների բների տեղադրման բարձրությունները

Մեր դիտարկումներով բների տեղադրման բարձրությունները պայմանավորված են ծառերի և թփուկների սաղարթի խտությամբ: Այսպես, այն վայրերը, որտեղ ծառերի կամ թփերի խտությունը ցածր է, բները տեղադրում են բարձր ճյուղերի վրա, իսկ հակառակ դեպքում՝ ցածր:

Սև կենտեխների թխսի տևողությունը 13-15 օր է, սակայն բնում անց են կացնում 11-13 օր: Ձվադրման ժամկետները ձգձգված են, դա պայմանավորված է ինչպես բազմացման կրկնակի ցիկլով, այնպես էլ կլիմայական պայմաններով և բնադրման անհաջող փորձերով: Մեր պայմաններում սկսում են ձվադրել մարտի երկրորդ դեկադից և շարունակում են մինչև հունիսի առաջին դեկադը: Տարբեր տարիների դիտարկումներով վաղ ձվադրումը կատարում են մարտի 16-ից մինչև մարտի 19-ը ընկած ժամանակահատվածում:

Բների կառուցման համար սև կենտեխներն օգտագործում են բնական ծագման նյութեր: Արտաքին կմախքը կառուցում են չոր ճյուղերից, խոտից, տերևներից, մամուռից, չոր կեղևներից: Զաղաքային պոպուլյացիաները բների կառուցման համար օգտագործում են անթրոպոգեն ծագման նյութեր՝ սինթետիկ թելեր, բամբակի և բրդի մնացորդներ: Տարբեր տարիների և վայրերում կատարված դիտարկումներով սև կենտեխների բների չափումներում շեղումները չնչին են և ներկայացվում են աղ. 4-ում:

Աղյուսակ 4. Սև կենտեխների բների չափումները

	min-max (սմ)	M (սմ)	m	σ	Cv%
D	10,5-13,7	12,6	0,14	0,7	5,55
d	9,3-11,7	10,5	0,12	0,6	8,94
H	10,2-14,5	13	0,18	0,9	4,4
h	7,8-11,2	9,8	0,14	0,7	5,5

Մեր դիտարկած 26 բներում ձվերի բնական տատանվում էր 3-ից մինչև 6-ի սահմաններում: Ձվերի երկարությունը տատանվում է 28-33,3 մմ-ի ($M=30,8$, $\sigma=1,5$, $Cv=4,78\%$, $n=118$), իսկ տրամագիծը՝ 17-22,6 մմ ($M=19,1$, $\sigma=1,4$, $Cv=9,95\%$, $n=118$) սահմաններում: Ձվերի չափումներում առկա շեղումները պայմանավորված են տվյալ տարածքի կերի կազմով և որակով [2]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Սև կենտեխները, լինելով տիպիկ անտառային թռչուններ, հեշտությամբ յուրացրել են ուրբանիզացված տարածքները և ձեռք բերել նստակյացություն:

2. Ստեփանակերտում սև կեռնեխների բների կարելի է հանդիպել լայնատերև և խառն անտառներում, պուրակներում, գերեզմանոցներում, այգիներում, ցածրահարկ կառույցներում, այգիների թված տնակներում, բուլվարների կանաչ տնկիներում, կենդանի և չորացած ծառերի փչակներում:

3. Ուսումնասիրված 275 բներից 71-ը կամ մոտ 25,8 %-ը տեղադրված են 1,5-ից մոտ 2 մ-ի վրա:

4. Սև կեռնեխները բոլոր հայտնաբերված բների մեջ թփերից առավել շատ նախընտրում են բնադրել ցախակեռասների վրա (9,45%), երկրորդ տեղը զբաղեցնում են մոշենիները (9%), հետո՝ մամխենին (6,9%):

5. Ստեփանակերտի կենտրոնում առավել նախընտրելի տեսակն ուռենին է՝ 11,2%, թխկին ու խնձորենին՝ 9,9%, արվարձաններում նախընտրում են ցախակեռասը՝ 8,7%, թխկին, մոշենին, մամխենին, քաղաքամերձ տարածքներում առավել նախընտրելի բնադրավայրերն են մոշի թփերը՝ 13,7%, ցախակեռասն ու մամխենին՝ 11,8%, սզենին՝ 10,8%:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Бибби К., Джонс М., Марсден С.* Методы полевых экспедиционных исследований. Исследования и учеты птиц. М., Союз охраны птиц России. 186 с., 2000.
2. *Климов С.М.* Эколого-эволюционные аспекты изменчивости морфологических показателей птиц. Липецк, 208 с., 2003.
3. *Тельнова В.В.*, Процессы синантропизации и урбанизации дроздов (Turdidae) в Центральном Предкавказье. Горные экосистемы и их компоненты: тр. Междунар. конф. Нальчик, 4-9 сентября 2005. Нальчик, с. 118-123, 2005.
4. *Erz W.* Ecological principles if the urbanization of birds. *Ostrish, Sup.* 6. p. 357-363, 1966.
5. *Evans K.L., Hatchwell B.J., Parnell M., Gaston K.J.* A conceptual framework for the colonization of urban areas: the blackbird *Turdus merula* as a case study. *Biological Reviews.* 85, 643-667, 2010. DOI: 10.1111/j.1469-185X.2010.00121.x.
6. *Kroll P.*, Amsel-Albino verwendet weisse Zelluloidstreifen zum Nestbau. *Ornithol. Mitt.* N 11. p. 216, 1959.
7. *Luniak M.* Synurbization – adaptation of animal wildlife to urban development. Urban wildlife conservation. Proceedings of the 4th Int. Symp. / Eds. W.W. Shaw, L.K. Harris, B. VanDruff. p. 50-55, 2004.
8. *Mendes S., Colino-Rabanal V., Peris S.* Bird song variations along an urban gradient: The case of the European blackbird (*Turdus merula*). *Landscape and Urban Planning.* 99, 51-57, 2011. DOI: 10.1016/j.landurbplan.2010.08.013.
9. *Moller A.P., Jokimäki J., Skorka P., Tryjanowski P.* Loss of migration and urbanization in birds: a case study of the blackbird (*Turdus merula*). *Oecologia.* 175, 1019-1027, 2014. DOI: 10.1007/s00442-014-2953-3.
10. *Partecke J., Gwinner E., Bensch S.* Is urbanisation of European blackbirds (*Turdus merula*) associated with genetic differentiation? *Journal fur ornithology.* 147, 4, 549-552, 2006. DOI: 10.1007/s10336-006-0078-0.
11. *Russ A, Lučeničová T, Klenke R.* Altered breeding biology of the European blackbird under artificial light at night. *Journal of avian biology.* 48, 8, 1114-1125, 2017. DOI: <https://doi.org/10.1111/jav.01210>.
12. *Wysocki D.* Nest re-use by Blackbirds – the way for safe breeding. *Acta Ornithol.* 39, 2, p. 164-168, 2004.

Ստացվել է 29.04.2022



Հայաստանի կենսաբ. հանդես, 3 (74), 2021

DOI:10.54503/0366-5119-2022.74.3-64

**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ՑՈՐԵՆԻ ՍՈՐՏԵՐԻ
ՉՈՐԱԴԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ ԸՍՏ Wdhn13 ԵՎ
WCS726 ԴԵՖԻԴՐԻՆ ԳԵՆԵՐԻ ԷՔՍՊՐԵՍԻԱՅԻ ԵՎ ՋՐԻ
ՀԱՐԱՔԵՐԱԿԱՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԻ**

Բ.ՎԱՅՐԱՄՅԱՆՍ, ԽՈՍՐԱԿԻԶԱԴ, Ա.Յ. ՄԵԼԻՔՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
biaynavahrani@gmail.com

Հայկական և իրանական ցորենի տասնհինգ սորտերի չորադիմացկունության մակարդակը համեմատելու նպատակով սերմերը 28 ժամ փորձարկվել են ջրային անբավարարության սթրեսի և ոչ սթրեսային պայմաններում: Ջրային դեֆիցիտ ստեղծելու նպատակով կիրառվել է Պոլի-էթիլենգլիկոլ 6000-ի (PEG6000) քիմիական նյութը: Ուսումնասիրվել են ջրի հարաբերական պարունակության տոկոսը (RWC) և Wdhn13, WCS726 դեֆիդրին գեների էքսպրեսիայի մակարդակը հակադարձ տրանսկրիպցիոն ՊՇՌ-ի միջոցով: Ըստ արդյունքների՝ բարձր դիմացկուն էին Նավիդ, Սաբալան, Չարե և Ոսկեհասկ սորտերը: Նշված սորտերում գեների էքսպրեսիայի գործընթացը սկսվեց սկզբնական ժամերում, երբ դեռ ջրի պարունակության տոկոսը բարձր էր: Այդ մակարդակը, 24-րդ ժամում հասնելով գագաթնակետին, հետագայում սկսեց դանդաղ նվազել: Երկրորդ տեղում էին Ազար2, Սաթենի22 և Ախթամար սորտերը, որոնք չեն պահել էքսպրեսիայի բարձր մակարդակը և 24-րդ ժամում նվազել էին: Երրորդ տեղում Սարդարի, Ավանդ, Փիշգամ, Նաիրի 68 և Արմյանկա60 սորտերն էին, քանի որ այդ սորտերի մոտ արդեն 18-րդ ժամում նկատվել էր էքսպրեսիայի մակարդակի նվազում: Իսկ Միհան, D92 և G31 սորտերը գնահատվեցին որպես զգայուն սորտեր, քանի որ նրանց գեների էքսպրեսիան սկսվեց դեռևս ջրի պարունակության տոկոսի նվազման ժամանակ: Այս սորտերում նվազումը նկատվել էր արդեն 12-րդ ժամում: Այս երկու ուսումնասիրությունները համատեղ, ամուր հիմք են սորտերի դիմացկունությունը որոշելու համար: Արհեստիկ սթրեսների դեմ պաշտպանող սպիտակուցները ուսումնասիրելով՝ կարելի է ստեղծել դիմացկուն սորտեր, բարելավել սորտի դիմացկունությունը և ստանալ բերքատվության բարձր հատկանիշներով օժտված սորտեր:

Արհեստիկ սթրես – դեֆիդրին գեներ – ջրային դեֆիցիտ – ջրի հարաբերական պարունակություն – ցորեն

В целях сравнения уровня засухоустойчивости пятнадцати возделываемых сортов армянской и иранской пшеницы был проведен одновременный молекулярно-физиологический опыт, в ходе которого семена испытывались в течение 28 часов в стрессовых условиях водной недостаточности и в нестрессовых условиях. Для создания водного дефицита использовалось химическое вещество полиэтиленгликоль 6000 (PEG6000). Был исследован процент относительного содержания воды (RWC) и Wdhn13 и WCS120 уровень экспрессии гена дегидрина с помощью ПЦР с обратным транскриптом. В результате высокоустойчивыми оказались сорта Навид, Сабала, Заре и Воскеаск. Процесс экспрессии генов у этих сортов начался в ранние часы, когда процент содержания воды был еще высоким. Достигнув пика к 24-му часу, она позже начала медленно снижаться. На втором месте оказались сорта Азар 2, Сатени 22 и Ахтамар, которые не смогли сохранить высокий уровень экспрессии

и снизились уже на 24-й час. На третьем месте оказались сорта Сардар, Алванд, Пишгам, Наири 68 и Армянка 60, уровень экспрессии которых снижался уже на 18-м часу. А Мухан, D92 и G31 были оценены как чувствительные сорта, потому что экспрессия их генов началась, когда процент содержания воды стал снижаться. У этих сортов снижение было заметно уже на 12-м часу.

Эти два совместных эксперимента составляют прочную основу для определения устойчивости сортов. Изучая белки, защищающие от абиотических стрессов, можно создать устойчивые сорта, повысить их устойчивость, получить сорта с высокими характеристиками урожайности.

*Абиотический стресс – водный дефицит – гены обезвоживания –
относительное содержание воды – пшеница*

In order to compare the level of drought resistance of fifteen Armenian and Iranian wheat varieties, the seeds were tested for 28 hours under drought stress and non-stress (controlled) conditions. Polyethylene Glycol 6000 (PEG6000) was used to preparing artificial drought conditions. Also we evaluate relative water content (RWC) and also expression level of *Wdhn13* and *WCS120* DHN genes by using reverse transcription PCR. According to the results, Navid, Sabala, Zare, and Voskehask varieties were highly resistant. The process of gene expression in these varieties began in the early hours, when the percentage of water content was still high. Reaching the peak in the 24th hour, it later began to decline slowly. In the second place were Azar 2, Sateni 22, and Akhtamar which could not maintain the high level of expression was decreased in the 24th hour. Sardari, Alvand, Pishgam, Nairi 68, and Armyanka 60 were in the third place, as the expression level decreased in those varieties already in the 18th hour. And Mihan, D92 and G31 were evaluated as sensitive varieties, because the expression of their genes began when the percentage of water content began to decrease. In these varieties, the decrease was noticeable already in the 12th hour. These two experiments together allow us to determine the resistance of varieties and by studying the mechanism of proteins for abiotic stresses, give us the ability to create resistant genotypes, improve the resistance of the genotypes, and obtain high yield characteristics.

Abiotic stress – dehydrin genes – water deficit – relative water content – wheat

Գյուղատնտեսության ոլորտում 21-րդ դարի ամենակարևոր խնդիրներից մեկը կլիմայի փոփոխությունն է, մասնավորապես գլոբալ տաքացումը: Արհեստիկ սթրեսները՝ երաշտը, բարձր ջերմաստիճանը, ցուրտը և հողի աղակալումը մշակաբույսերի արտադրողականության նվազման առաջնային գործոններն են [2]: Բույսերի արհեստիկ սթրեսներին արձագանքող մեխանիզմների ուսումնասիրությունը, կարևորագույն դեր է կատարում բուսաբուծության ոլորտում՝ դիմացկուն սորտեր մշակելու և ստանալու նպատակով: Բույսերն օժտված են սթրեսներին դիմակայելու տարբեր մեխանիզմներով, որոնք ներառում են բույսի ֆիզիոլոգիական փոփոխությունները և սթրեսի հետ կապված գեների էքսպրեսիան: Ջրային անբավարարության պայմաններում բույսերն արտադրում են մի շարք սպիտակուցներ՝ բջիջների նյութափոխանակությունը պաշտպանելու նպատակով:

Սույն աշխատանքում բազմաթիվ սպիտակուցներից հետազոտվել են LEA 2-րդ խմբին պատկանող սպիտակուցները: Այս սպիտակուցները, որոնք ճանաչվում են նաև որպես դեհիդրիններ, հիմնականում կուտակվում են ջրազրկվող բույսերի հյուսվածքներում և գործում են որպես պաշտպանիչ մոլեկուլներ և կանխում բջիջների վնասվածությունը [16]: Դեհիդրինները, ըստ ամինաթթուների հաջորդականության նմանության կառուցվածքային բնութագրերի և իրենց մոլեկուլներում պահպանված հատվածների (K-, Y-, S- և O), բաժանվում են YnSKn, YnKn, SKn, Kn և KnS դասերի [14], [8]:

YSK2 տիպը կարգավորվում է երաշտի սթրեսի ժամանակ, մինչդեռ SK3, Kn և KS տիպին պատկանող հատվածները՝ երաշտի, ինչպես նաև ցածր ջերմաստիճանի սթրեսի

Ժամանակ [13]: Ջրային ղեֆիցիտին դիմակայելու գործընթացը մասնավորապես կապված է Kn տիպի հետ, որը նաև ազդում է ադիության, Աբսիզային և Սալիցիլային թթուների պարունակության վրա սթրեսների ժամանակ [7]: *WCS726* (K6) և *WDHN13* (K2)-ն պատկանում են K(n) տիպի ղեֆիցիտներին: 12,8 կիլոգրամ մոլեկուլային բաշով *Wdhn13*-ը ղեֆիցիտների խմբի ամենափոքր ներկայացուցիչն է, որը գտնվում է ցորենի 7-րդ խմբի բրոմոսոմների վրա: Այն հիմնականում ցրտադիմացկունության գեն է, բայց հանդես է գալիս նաև որպես չորադիմացկունության գեն [11]: Իսկ 21 կիլոգրամ մոլեկուլային բաշով *WCS726*-ը գտնվում է ցորենի 6-րդ խմբի բրոմոսոմներում և կուտակվում է պլազմային թաղանթի շուրջը: Այս սպիտակուցի կուտակումն ուղղակիորեն կապված է ցորենի ցրտահարման և սառեցման դիմաց հանդուրժողակա- նության զարգացման հետ [9]:

Սորտերի չորադիմացկունության մակարդակը որոշելու նպատակով հաշվարկ- վում է նաև տերևներում ջրի հարաբերական պարունակությունը (RWC), որի միջոցով կարելի է գնահատել տերևների հյուսվածքներում նյութափոխանակության ակտիվու- թյունը և որոշակի ժամանակային կտրվածքով պատկերացում կազմել ջրի ղեֆիցիտի մակարդակի և դրան դիմակայելու մասին [5,10]:

Չետագոտության նպատակն է ուսումնասիրել և համեմատել հայկական և իրանական ցորենի սորտերի չորադիմացկունության մակարդակն ըստ *Wdhn13* և *WCS726* ղեֆիցիտների էքսպրեսիայի, ինչպես նաև ջրային հարաբերական պարունա- կության: Այս երկու ուսումնասիրությունները համատեղ ամուր հիմք են սորտերի դիմացկունությունը որոշելու համար:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրվել են *Triticum aestivum* ցորենի հայկական՝ Սաթենի 22, Ախթամար, Արմյանկա 60, Ոսկեհասկ, Նաիրի 68 և իրանական Սարդարի, Նավիդ, Ավանդ, Միհան, Ազար 2, Սաբալան, Չարե, Փիշգամ, D92, G31 սորտերը: Իրանական սորտերի սերմերը ձեռք են բերվել Իրանի Անդաթաբական նահանգի գյուղատնտեսական և բնական ռեսուրսների հետազոտա- կան կենտրոնից, իսկ հայկականը՝ Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոնից: Ցորենի միատեսակ չափսի սերմերը 8 ռոպե 0,1% HgCl₂-ում ախտահանվելուց հետո ծեցվել են մթության մեջ 48 ժամվա ընթացքում: Սերմերը տեղադրվել են ֆիլտրի թղթի շերտեր պարունակող պետրիի թասերում և 10 օր մշակվել ցերեկային /գիշերային 25 /20, 16 Ժ /8Ժ (լույս/մութ) և ջերմաստիճանի ռեժիմով: 10 օրական ծիլերը բաժանվել են երկու խմբի և 28 ժամ հետազոտվել սթրեսային և ոչ սթրեսային պայմաններում: Ոչ սթրեսային պայմանը, որը նաև որպես հսկիչ ծիլերը ստացել են բավականաչափ ջուր, իսկ սթրեսային պայմաններ իրականացնելու նպատակով ծիլերը ստացել են -0.49M Մեգա պասկալ (MPa) օսմոտիկ ճնշում: Օսմոտիկ ճնշում կիրառելու հետևանքով ստացվում է արհեստական երաշտային պայման: -0.49M Մեգա պասկալ (MPa) օսմոտիկ ճնշում ստեղծելու նպատակով թորած ջրին ավելացվել է 20% Պոլիէթիլեն- գլիկոլ6000 (PEG6000)՝ ըստ Միշելի և Կաուֆմանի մեթոդիկայի [9]: Պոլիէթիլենգլիկոլի կիրառման առավելությունն այլ օսմոտիկ լուծույթների՝ բջի մեջ ջնդրափանցելու և բջիջը չվնասելու հատ- կությունն է [1]: 28 ժամ հետազոտության ընթացքում թե՛ մոլեկուլային և թե՛ ջրի հարաբերական պարունակության հաշվարկները կատարվել են 2, 4, 6, 12, 18, 24 և 28-րդ ժամերում: Ավարտին ծիլերը սառեցվել են հեղուկ ազոտի մեջ և պահվել -40°C ջերմաստիճանում՝ գեներն ուսում- նասիրելու նպատակով:

Ջրի հարաբերական պարունակությունը (RWC) հաշվարկելու նպատակով որպես փորձ- նական նյութ կիրառվել է տերևը: Կշռվել է տերևի թաց բաշը 0, 2, 4, 6, 12, 24 և 28 ժամերի ընթացքում (Fresh weight) դիտարկելու համար: Հաշվարկվել է տերևի հագեցած բաշը (Turgid weight), երբ տերևները 4 ժամ ընկղմվել են ջրի մեջ, իսկ ընդհանուր չոր բաշը (Dry weight) չափելու նպատակով տերևները չորացվել են 60 °C-ում 24 ժամ և կշռվել: Տերևի RWC-ն հաշվարկվել է հետևյալ բանաձևով [6]: Բոլոր փորձերը կրկնվել են 3 անգամ:

$$RWC = [(FW - TW) / (TW - DW)] \times 100\%.$$

Wdhn13 և *WCS726* ղեֆիցիտի գեների էքսպրեսիայի մակարդակը որոշելու նպատակով կատարվել են հետևյալ բայլերը.

- ՌՆԹ-ի անջատում ցորենի ծիլերից
- Կոմպլեմենտար ԴՆԹ (Complementary DNA)-ի սինթեզ
- Հակադարձ տրանսկրիպցիոն պոլիմերազային շղթայական ռեակցիա (Reverse transcription polymerase chain reaction)
- Ժել էլեկտրաֆորեզի անցկացում
- ՊՇՈ-ի արդյունքների նորմալացում և տվյալների վերլուծություն:

ՌՆԹ-ն անջատվել է Bio-Rad ընկերության արտադրության (Aurum total RNA) նյութափաթեթի միջոցով: Այնուհետև կոմպլեմենտար ՂՆԹ-ի սինթեզը կատարվել է նույն ընկերության կողմից արտադրված (iScript cDNA Synthesis) նյութափաթեթի միջոցով: Բոլոր գործողություններն իրականացվել են արտադրող ընկերության կողմից ներկայացված մեթոդիկայի համաձայն:

ՊՇՈՒ-ն իրականացվել է՝ խառնելով 1 միկրո լիտր կոմպլեմենտար ՂՆԹ-ի նմուշը 50 միկրո լիտր ՊՇՈՒ բուֆերի մեջ, որը ներառում էր՝ (10 միլիմոլ Tris-HCl, 8.3 pH-ով, 1.5 միլիմոլ MgCl₂, 50 միլիմոլ KCl) նաև 0.1 միլիմոլ dNTP, 1 միկրո մոլար աջ և ձախ պրայմերներ (աղ. 1) և 0.5 բաժին DyNAzyme DNA պոլիմերազ: Պոլիմերազային շղթայական ռեակցիան անցկացվել է ամպլիֆիկատորում: Ամպլիֆիկացիան կատարվել է (95°C - 5ր, 95°C - 1ր, 50°C - 1ր., 72°C - 1ր) 35 ցիկլ, 72°C - 10ր) ծրագրով:

